ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 01 » հունիսի 2026թ. № 200-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ 2026 թվականի հունիսի 03-ին ժամը 11:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանում՝ հետևյալ օրակարգով համաձայն՝ հավելվածի:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

2026թ. հունիսի 01
գ. Լոռի Բերդ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի

2026թ. հունիսի 01-ի № 200-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Անցկացման վայրը. Լոռի Բերդի համայնքապետարան

Անցկացման ժամանակը. 03.06.2026թ. ժամը 11:00-ին

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը:

1. 1. Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու արտահերթ նիստ 2026 թվականի հունիսի 03-ին ժամը 11:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանում՝ հետևյալ օրակարգով.

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026թ. հունիսի 03-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
(Զեկուցող՝ Ա. Ներսիսյան)

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
(Զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

3) «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 08-ի թիվ 28-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
(Զեկուցող՝ Ա. Մարտիրոսյան)

2. Ելույթներ, առաջարկություններ:
3. Նիստի փակում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ե.Ս.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ.Loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» հունիսի 2026թ. № 201-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի 06-009-0051-0044 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, Ագարակ բնակավայր 2-րդ փողոց, 3-րդ փակուղի, թիվ 5/3 հողամաս փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

2026թ. հունիսի 04
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ: loriberdhamaynq2017@.ru

ՈՐՈՇՈՒՄ

«04» հունիսի 2026թ. № 202-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ , ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 8-րդ կետով, «Տեղակա ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստան Հանրապետության կառավարության 2015թ. հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետությա համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստան Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվական մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշմամբ Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգո միջգերտեսչական հանձնաժողովի 28.12.2023թ. թիվ 2/-14 դրական եզրակացությունը, ինչպե նաև հիմք ընդունելով՝ «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի բնակավայրերի գլխավո հատակագծի մշակման-նախագծման առաջադրանքը հաստատելու մասին» Լոռի Բեր համայնքի ավագանու 13.01.2023թ. թիվ 5-Լ և «Լոռի Բերդ համայնքի ավագանու գոտիավորմա նախագիծը հաստատելու մասին» 10.05.2024թ. թիվ 32-Ա որոշումները, «Լոռու մարզի Լոռի-միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթեր տարածքային հատակագծման մասով հաստատելու մասին» ՀՀ Լոռու մարզպետի 16.05.2024թ թիվ 259-Ա որոշումը, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանվա կարգով հաստատված 29.03.2026թ. թիվ 2026NVYRPE ծածկագրով տրամադրված հաշվառմա (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը, ինքնակամ կառույցի հաշվառմա փաթեթի վերաբերյալ համաձայնությունը, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամ հաստատված կարգով, հիմք ընդունելով՝ «Սամվել Ֆրանգյան Կամսարի» ԱՁ-ի կողմից կազմվա տեղադրական հատակագիծը, ինչպես նաև հիմք ընդունելով Արթուր Գագիկի Օհանյան /նույնականացման քարտ՝ 009270877, ծնված 17.11.1971թ./ կողմից ներկայացված 08.05.2026թ թիվ 114 դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Ճանաչել օրինական 06-044-0207-0083 կադաստրային ծածկագրում գտնվող Արթուր Գագիկի Օհանյանի կողմից 2003թ.-ին ինքնակամ կառուցված՝ 24,32 քմ մակերեսով պարիսպները և 15,83 քմ մակերեսով հարթակը, առանձնացնել զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված

հողերի թվին չդասվող 0.11959 հա մակերեսով հողամասը համաձայն հավելվածի և նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի սեփականության իրավունքը:

2.Պարիսպների և հարթակի սպասարկման համար անհրաժեշտ 0,11959 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտը համաձայն «Սամվել Ֆրանգյան Կամսարի» ԱՁ-ի կողմից կազմված տեղադրական հատակագծի փոխադրել բնակավայրեր նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

3. Հողամասի տեղադիրքը, սահմանային չափերը և մակերեսը հաստատել համաձայն «Սամվել Ֆրանգյան Կամսարի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված դեղադրական հատակագծի:

4. Ինքնակամ կառուցված պարիսպները և հարթակը՝ չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունքը:

5. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայկնքի Լոռի Բերդ բնակավայրում գտնվող 06-044-0207-0083 կադաստրային ծածկագրով, 0,11959 հա մակերեսով հողամասին շնորհվել է. Լոռի Բերդ համայնք, Լոռի Բերդ բնակավայր, Ստեփանավան-Լոռի Բերդ խճուղի թիվ 11/2 հողամաս հասցեն:

6. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանում 24,32 քմ մակերեսով պարիսպների, 15,83 քմ մակերեսով հարթակի և 0,11959հա մակերեսով զբաղեցված հողամասի նկատմամբ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

7. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն նշված կառույցը իրականացրած անձին՝ կառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

2026թ. հունիսի 04

գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ.Loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» հունիսի 2026թ. № 203- Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրի 06-038-0120-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 0.29422 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողամասին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, Լեջան բնակավայր, թիվ 12 հողամաս փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

2026թ. հունիսի 04
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փող., 7

հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հունիսի 2026թ. № 204-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-044-0214-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՐԱԾ 0.32024 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ ՀՀ կառավարության 17.09.2009թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1066-Ն որոշման պահանջներով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով և հաշվի առնելով Լոռի Բերդ համայնքի գլխավոր հատակագիծը, Լոռի Բերդ համայնքի ավագանու գոտիավորման նախագիծը հաստատելու մասին 10.05.2024թ. թիվ 32-Ա որոշումը, ՀՀ Լոռու մարզպետի 16.05.2024թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ-8 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾՄԱՆ ՄԱՍՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 259 Ա որոշումը, Լոռի Բերդ համայնքի գլխավոր հատակագիծը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Լոռի Բերդ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող Լոռի Բերդ բնակավայրում գտնվող 06-044-0214-0001 կադաստրային ծածկագրից առանձնացրած 0.32024 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքը փոխադրել առավել բարձրարժեք խոտհարք գործառնական նշանակության հողատեսքի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ. տ.

2026թ.հունիսի 09
Գ. Լոռի Բերդ